

մանրամասն պատմութիւնը և նկարագրութիւնը տեսնել շ. Վ. Ե. (էջ 13-21):

10. Վերնասան եկեղեցիին աւանդութիւնները. — Վերնատան մէջ կատարուած երկու մեծ դէպքերուն՝ վերջին ընթերցաց եւ Հոգեգաղսեան առթիւ կը կատարուին բազմաթիւ նուիրական յիշատակներ:

Պետրոս և Յովհաննէս պատրաստեցին Զատիկը(\*) Քրիստոսի աշակերտ՝ հարուստի մը տան վերնայարկին մէջ: Երեկոյին՝ Յիսուս լուաց իր աշակերտաց ոտքերը գալիք խորհուրդին պատրաստելու համար զանոնք: Յետոյ, վերջին անգամ զատկական գառն ուտելէ վերջ, Գառն Աստուծոյ, իր զոհագործութենէն առաջ կը հաստատէ հաղորդութեան խորհուրդը եւ նըւիրապետութիւնը: Ան գուշակեց Յուզայի մատնութիւնը եւ Պետրոսի երիցս ուրացումը: Անոր մահէն

---

(\*) Եւսիփոս Կ. Պոլսեցի պատմագիր (552-582) համաձայն, Փրկիչը Զասկի տունն ունեցած է երեք ընթրիփներ այլ եւ այլ տեղեր. մին Գեթեմանիի եւ միւսն ալ Բեթանիոյ մէջ. ասկէ յետոյ բուն Զասիկը տեղի ունեցած է, խորհրդական եւ ցանկալի Զասիկը, բայց ոչ ծիսական Զասիկը: Երբոր ընթրիք՝ խորհրդականը ա՛ն է որու մասին Յիսուս կ'ըսէ. «Ցանկանալով ցանկացայ զայս պատեմ ուտել ընդ ձեզ՝ մինչեւ չարչարեալ իցեմ» (Ղուկ. ԻԲ. 15): Ուրեմն իր չարչարանէն առաջ կերաւ Զասիկը, այսինքն խորհրդականը, առանց չարչարանի, ինչպէս Զասիկը այդպէս կը կոչէ. խորհրդաբար ուրեմն զոհն եղաւ երբ հացը առաւ իր ձեռաց մէջ ընթրիփէն յետոյ. զոհացաւ, օրհնեց եւ բեկանեց զայն: Ահա այս երբոր ընթրիփն է որ տեղի ունեցած է Սիոնի մէջ: Այնպէս որ խորհրդական Զասիկէն յետոյ որ Տերորը ձեռնով կատարուեցաւ Սիոնի մէջ, 14րդ օրուան սկիզբը, ա՛յն որ հետեւեալ օրը հրեաները կատարեցին, այսինքն ուրբաք օրը, որ է անցեալ 14րդ օրը, այլեւս Զասիկ չէ ան: Օրէնքը լինցած էր եւ հետեւաբար դասապատրուած (Քարոզ Զասիկին, P. 86, 2392 եւ հետեւեալ):